ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

Լերմոնտովո համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի նիստի.

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Իվան Բոլոտինը, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոլյովը, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:30-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1.Լերմոնտովո համայնքի բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվություն

զեկ. Մ.Բոլոտինա

2.Տարեկան աշխատանքային պլանի հաստատման մասին

զեկ. Ա.Հարությունյան

3.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ուղղակի վաճառքի մասին

զեկ. Ա.Գալուստյան

4.Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների հավելավճարի չափը սահմանելու մասին

զեկ. Մ.Բոլոտինա

ԸՆԹԱՑՔԸ՝

1. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2022թ-ի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին հաղորդումը.

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան, նա ներկայացրեց առաջին եռամսյակի կատարման հաշվետվությունը

Տեղի ունեցան քննարկումներ, որի զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում:

2.ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովոյի համայնքապետարանի 2022թ-ի Տարեկան աշխատանքային պլանի հստաըման մասին որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Հարությունյանը, որը մանրամասն ներկայացրեց տարվա ընթացքում նախատեսվելիք աշխատանքները:

Քննարկումների ընթացքում պարզաբանվեցին որոշ հարցեր:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Լերմոնտովո համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի ուղղակի վաճառքի մասին

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ա.Գալուստյանը, ով տեղեկացրեց, որ նշված հողամասը ցանկանում է գնել նախկին վարձակալը:

Ավագանու անդամները չառարկեցին նշված նախագծին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Աշխատակազմի համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների հավելավճարի չափը սահմանելու մասին

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մ.Բոլոտինան: Նա ներկայացրեց ՀՀ "Համայնքային ծառայության մասին" օրենքով սահմանված հավելավճարի մասին և ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

5.ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ